ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Արմավիրի մարզ, գ.Բաղրամյան, (0233) 22250
baghramyanhamaynqapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<23>> ՄԱՐՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ N 216-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և հիմք ընդունելով «Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի թիվ 13-Ն հրամանով հաստատված կարգի 11-րդ կետ.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար 2023 թվականի մարտի 26-ին նշանակել և անցկացնել մրցույթներ հետևյալ թափուր պաշտոնների համար՝

1) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի (ծածկագիր՝ 2,1-1) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ հայտարարել և անցկացնել 2023 թվականի ապրիլի 26-ին ժամը 10:00-ին գ. Բաղրամյան, Բաղրամյան փողոց 2/3 շենք հասցեում:

2) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյանի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետի (ծածկագիր՝ 3,2-12) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ հայտարարել և անցկացնել 2023 թվականի ապրիլի 26-ին ժամը 12:00- ին գ. Բաղրամյան ,Բաղրամյան փողոց 2/3 շենք հասցեում:

3)) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյանի համայնքապետարանի աշխատակազմի երկրերդ կարգի մասնագետի (ծածկագիր՝ 3,3-6) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ հայտարարել և անցկացնել 2023 թվականի ապրիլի 26-ին ժամը 14:00- ին գ. Բաղրամյան ,Բաղրամյան փողոց 2/3 շենք հասցեում:

4) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյանի համայնքապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետի (ծածկագիր՝ 3,3-5) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ հայտարարել և անցկացնել 2023 թվականի ապրիլի 26-ին ժամը 16:00- ին գ. Բաղրամյան ,Բաղրամյան փողոց 2/3 շենք հասցեում:

2.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոնների զբաղեցնելու համար մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

3.Աշխատակազմի քարտուղարին՝ սահմանված կարգով ապահովել սույն որոշման առաջին կետում նշված մրցույթների անցկացման մասին հայտարարությունների հրապարակումը և նախապատրաստական աշխատանքների իրականացումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ